

ԴՎԻՆ ՏԵՂԱՆՎԱՆ ՎԱՊԵՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Գ. Գ. ԶՈՇԱՐՅԱՆ

Լեզվաբանության և հնագիտության ներկա մակարդակը հնարավորություն է ընձեռում ամկա տվյալների համեմատական վերլուծությամբ ճշտել ԴՎԻՆ տեղանվան վաղեմությունը:

Մովսես Խորենացու վկայությամբ, քննվող հնավայրը «... ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր»¹, սակայն մասնագետների որոնումները հին ու նոր պարսկերենում ձևով ու նշանակությամբ մնացածի գոյություն չհաստատեցին:² Այդուհանդերձ, Խորենացու հաղորդածը ծանրակշիռ է և ԴՎԻՆ տեղանվանը անդրադարձած հեղինակներին³ ցարդ պահել է պարսկամետ տեսակետի վրա: Վ. Մինորսկին⁴ և, ելնելով նույն աղբյուրից, այս տեղանունը համադրում է Գորգանի հովտի (Հյուսիսարևելյան Իրան՝ Վրկանաց աշխարհ=Աստարաբադի մահանգ) Gira-duvīn, Lāla-duvīn, Sultan-duvīn, Kafir-duvīn, Sang-duvīn արհեստական բլուրների տեղանունների հետ և ԴՎԻՆ բառը համարում ներմուծված Արշակունիների կողմից՝ որպես «մշակութատեխնիկական տերմին»: Հեղինակը վկայակոչում է մահ Գաբուտի (XIII դ.) աշխարհագրական բառարանում հիշատակված Davīn գյուղանունը՝ Ուստուվայում (այժմ՝ Քուչան), որը Արշակունիների հարստության օրրանն էր: Վ. Մինորսկին համադրում է duvīn բաղադրիչով ևս երկու տեղանուն՝ Kāl'a-Duvīn, Āwī-Duvīn արևմտյան Իրանում՝ նշելով այստեղ Արշակունիների ունեցած ազդեցության հանգամանքը: Սակայն, ԴՎԻՆ տեղանունը Արշակունիների կողմից բերված լինելու իր վարկածը շարադրելուց հետո, Վ. Մինորսկին գտնում է, որ «Խորենացու խոսքը հեռավոր ստուգաբանության մասին չէ» և չի բացառում «նույնիսկ մախա-իրանական աղբյուրից» լինելը:⁵ Իրավամբ, Դուին (ԴՎԻՆ) տեղանվան ստուգաբանությանն անդրադարձած հայագետներից Ն. Բյուզանդացու⁶ կելտական լեզուներից բերած գուգահեռների շրջանակն ընդլայնում է Գ. Ջահուկյանը, ըստ հնդեվրոպական լեզուների նորագույն ստուգաբանական բառարանների տվյալների, և այդ բառերի ՀՆԽ *d^heuu – հիմքից

¹ Մովսես Խորենացու, Պատմություն Հայոց, Տվրիս, 1913, գիրք 3-րդ, գլ. Ը:

² M. J. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie I, Paris, 1818, p. 119, Մովսես Խորենացու, Հայոց պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Մտ.Մալխասյանի, Ե., 1990, էջ 281, ծանոթ. 231:

³ U. S. Երևանյան, Հայաստանը հռոմեա-պարթևական հսկամարտության ոլորտում (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, 1971, էջ 761), Գ. Գ. Զոշարյան, ԴՎԻՆը անտիկ դարաշրջանում, Ե., 1991, էջ 6-8, A. A. Kalantarian, Dvin histoire et archeologie de la ville medievale, Neuchâtel-Paris, 1996, p. 12.

⁴ M. V. Minorsky. Le nom de Dvin (Revue des études arméniennes X/1, 1930, p. 117-120.

⁵ Նույն տեղում, էջ 120:

⁶ Ն. Բյուզանդացու, Տեղեկություն ի գիրս պատմության Մանիանոսի Տարոնեցայ Ասողիկ կոչեցելոյ, Ս., 1889, էջ 12-13:

ծագած լինելու պարագայով հիմնավորում իրանական համապատասխան բառի առկայության իր տեսակետը:⁷

Ի մի բերելով հունարենում (Θίς, սեռ. Θίς «ավագաթումբ, հողաթումբ, քումբ») և կելտ-գերմանական բարբառներում (կիմր., գալ. dūn «բլրակ, հողաբլուր», հին. իռլ. dūn «ամրոց», ստ. բրետոն. tun «բլուր», հին. անգլ. dūn «քարձուռք, լեռ», տնո «քաղաք»...) ՀՆԽ *d^[h]eu – հիմքից ծագած բառերի իմաստները և լրացնելով Թ. Գամկրելիձեի ու Վ. Իվանովի «բնակավայր բարձունքի վրա» բանաձևը,⁸ կունենանք «[ամրոց-] բնակավայր բարձունքի վրա»⁹:

Այժմ հարկ է կրկին անդրադառնալ Վ. Մինորսկու վարկածին՝ dūvīn «մշակութատե՝ ԵՄԿՄական տերմինի» կիրառման վաղեմությունը ճշտելու ստույգով: Այսօր անառարկելի է մեր տարածաշրջանում հնդեվրոպացիների ներկայությունը ամնվագն Զ. ա. II հազարամյակի կեսերից, իսկ Հյուսիս-արևելյան Իրանի dūvīn բաղադրիչը տեղանվան մեջ պահպանած բնակավայրերը այդ նույն ժամանակահատվածում արդեն, նախորդ քաղաքակրթությունների (մեոփ-բրոնզի դարաշրջաններ) շերտերով կազմված, արհեստական բլուրներ էին¹⁰ և, ըստ Վ. Մինորսկու, կազմում էին Էրուրսի նախալեռան պաշտպանական շարք՝ հյուսիսային քոչվոր ցեղերի ասպատակությունների դեմ:¹¹ Մրանք փաստորեն հանդիսանում էին «ամրոց-բնակավայր բարձունքի վրա», այսինքն՝ լիովին համապատասխանում էին ՀՆԽ *d^[h]eu – հիմքի իմաստային բանաձևին, ուստի և բխում այդ նույն հիմքից:¹² Այսպիսով հաստատվում է dūvīn բառի նախաիրանական ծագման մասին Վ. Մինորսկու հայտնած թեական կարծիքը:

Բրոնզի ու երկաթի դարաշրջանների «ամրոց-բնակավայր բարձունքի վրա» բանաձևին համապատասխանող հուշարձաններ սփռված են Իրանում (Յագդեպե, Ելկենդեպե, Ույթեպե, Կիզիթեպե...), Հայաստանում (Էլառ, Աղթամար, Մեծամոր, Թիլի-թեպե, Բորուջե-թեպե...), Փոքր Ասիայում

⁷ Գ. Բ. Ջահուկյան, Մասագրանություններ (Պատմա-բանասիրական հանդես, 1963, № 4, էջ 97), նույնի՝ Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Ե., 1987, էջ 584:

⁸ Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, с. 744 – 745.

⁹ Մույն բանաձևը լրացուցիչ հիմնավորում կստանա քաղաքաշինական առումով իմաստային կապ ունեցող ՀՆԽ *d^[h]erǵ^[h] – «ամրոց, ամրություն», «քարձր, լեռ» հիմքից բխած (հայ. բուրգն «քուրդ, աշտարակ», գոթ. baürgs «քաղաք, աշտարակ», հին վ. գերմ. burg «ամրոց», հուն. ἄργος «աշտարակ, պատվար, ամրոց, հողապատնեշ», լատ. burgus «քուրդ, ամրացված բնակավայր») բառերի համադրությամբ:

¹⁰ Այդ մասին տե՛ս Mary M. Voigt, Robert H. Dyson, Northeastern Iran (The chronology of Iran, CA. 8000-2000 B. C., Chicago, 1986).

¹¹ M. V. Minorsky, նշվ. աշխ., էջ 18:

¹² Հատկանշական է նաև Իրանական սարահարթի dūvīn բաղադրիչով տեղանուն ունեցող բնակավայրերի և Davīn գյուղի՝ միգրացիոն ուղիների վրա գտնվելու փաստը, քանի որ անկախ ժողովուրդների տեղաշարժերի ուղղությունից, անկախ հնդեվրոպացիների նախահայրենիքի տեղադրումից, այն մնում է հոգուտ բառի՝ ՀՆԽ *d^[h]eu – հիմքից ծագած լինելու լրացուցիչ կտվան (այս տարածաշրջանում հնդեվրոպացիների տեղաշարժերի մասին տե՛ս М. Н. Погоребов, Иран и Закавказье в раннем железном веке, М., 1977, с. 10 – 22):

(Խաթթուսաս, Ալիշար, Տրոյա...), Հունաստանում (Լերն, Դորիոն, Միքեն, Տիրինթոս...), Եվրոպայի տարբեր շրջաններում (Մինգիդունում, Վենեց, Մանխինգ, Բոհեններգ, Տիտելբերգ, Բիրրակաե, Լուգդունում, Նովիորունում, Կամուլորունում...) և այլուր: Անշուշտ, գետահովիտներում բարձունքի, ինչպես նաև գետախառնուրդի զառիթափ ակերով կազմված հրվանդանների վրա (հմտ. Գառնի) կամ գետափերի դարավանդներին (հմտ. Շենգավիթ) բնակավայր հիմնելու եղանակները հնդեվրոպական լեզուներով խոսող ժողովուրդների զբաղեցրած տարածքներից շատ ավելի լայն ընգրկում ունեն, սակայն այժմ մեզ հետաքրքրող ոչ թե քաղաքաշինական գաղափարն է ինքնին (շրջապատի վրա իշխող դիրք, բնական պաշտպանվածություն և դրա զորեղացում ամրաշինական՝ պարիսպ, ջրով լցված խանդակ, հողապատվար համակարգով), այլ Դվին տեղանվան ծագումն ու ժամանակի ընթացքում բառի կրած իմաստային փոփոխությունը:

Այժմ անդրադառնանք քննվող Դվին հնավայրի՝ քրոնոգի ու երկաթի դարաշրջաններով թվագրվող ստորին շերտերին, որոնց ներկայացրած ամրոց-սրբավայրերը կազմված են հիշատակված բնակավայրերին բնորոշ քաղաքաշինական «բլուր, գետ, դաշտ»¹³ համալիրի սկզբունքով (հմտ. Արմավիր, Տրոյա, Լուգդունում...): Այստեղ անհրաժեշտ է, բնական (Մեծամոր, Սարի-թեփե, Լուգդունում...) և արհեստական (Մոխրաբլուր, Բեյ-ջե-Մուլթան, Թյուրենգ-թեփե...) բլուրների վրա սրբավայրի առկայության հանրահայտ փաստից ելնելով, կազմել մամոռիմակ հուշարձանների այս ենթախումբը բնորոշող բանաձևի տարրերակ՝ «ամրոց-սրբավայր բարձունքի վրա»: Թեև Դվինի ստորին (Ջ. ա. III հազարամյակ) շերտում սրբավայրի առկայությունը ենթադրական է և կարոտ է առաջիկա պեղումներով հաստատվելու, սակայն այստեղ, բազմակի ավերումներին հակառակ, սրբավայրի առկայության ավանդապահ տևականությունը բավարար հիմք է մնան կարծիքն ընդունելի համարելու համար: Դվինի հաջորդ (Ջ. ա. I հազարամյակի սկիզբ) շերտում քաղաքաշինական պաշտամունքային հարուստ նյութը¹⁴ հաստատում է այստեղ տաճարախիտ սրբավայրի առկայություն: Պաշտամունքային և ամրաշինական այս խոշոր կենտրոնի դերն ու շրջապատի վրա ունեցած ազդեցությունն այնքան նշանակալից էին, որ Էթիունին նվաճելիս Վանի թագավորության քրմապետերը հարկ համարեցին, այն հրո ճարակի մատնելուց բացի, հիմնովին ավերել նույնիսկ դամբարանադաշտը՝ իր մահարձաններով հանդերձ:¹⁵ Հետևաբար, Դվինի այս շերտերը բնութագրելու համար առավել հատկանշական է բանաձևի վերջին սրբազրումը՝ «ամրոց-սրբավայր բարձունքի վրա»:

¹³ Ա. Զարյան, Ավանդներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Ե., 1986, էջ 29:

¹⁴ К. Х. Кушнарева, Древнейшие памятники Двина, Е., 1977.

¹⁵ Այդ մասին տե՛ս մեր հոդվածը "Trésors de L'Arménie ancienne des origines au IV^e siècle" գրքում (Paris, 1996, p. 114), Գ. Զոչարյան, Արտահայտչամիջոցների ոճաբանական վերլուծությանը թվագրման վարձ [Աշտանակ (հայագիտական պարբերագիրք), Բ, Ե., 1998, էջ 154-162]:

Վերը բերված մույնատիպ բնակավայրերի այս լայնատարած ցանցում առանձնահատուկ ուշադրության է արժանի Դանուրի ստորին հոսանքից մինչև Պիրենեյան լեռներ և Բրիտանական կղզիներ ընդգրկող տիրույթի գետահովիտներում՝ բլուրների վրա հիմնված կելտական՝ Singidunum,¹⁶ Eburodunum (2),¹⁷ Uxellodunum,¹⁸ Vellaunodunum,¹⁹ Lungdunum(3),²⁰ Mel(1)odunum,²¹ Verodunum,²² Noviodunum(5),²³ Calulodunum,²⁴ Dunum²⁵ հնավայրերի տեղանունների * dūn «բարձունք, լեռ, բլուր, քաղաք, ամրոց» բաղադրիչը, որն իր ծագմամբ ու իմաստով համահունչ է և՛ Արաքսի հովտի Դուին տեղանվանը, և՛ Գորգանի հովտի Girā-duvīn, Lala-duvīn և այլ հնավայրերի տեղանունների duvīn բաղադրիչին: Այս հանգամանքը առավել համոզիչ է դարձնում քննվող Դուին (Դվին) տեղանվան հնդեվրոպական ընդհանրությունից՝ ՀՆԽ *d^heu – հիմքից, ծագած լինելու վարկածը (տե՛ս կից քարտեզը):

Այսպիսով, Իրանական սարահարթի հիշյալ հնավայրերը տեղանուններում duvīn բաղադրիչը ունենալու, իսկ Արաքսի հովտի հնավայրը Դուին կոչված լինելու վաղեմության առումով (անշուշտ, որոշ վերապահությամբ) կարելի է պայմանականորեն համաժամանակյա համարել և, որ ամենակարևորն է, այդ անվանակոչությունը երկու դեպքում էլ շուրջ մեկ հազարամյակ մախրդել է Արշակունիների պատմական ասպարեզ իջնելուն:

Համադրելով համեմատական լեզվաբանության տեսական տվյալները և հնագիտության փաստացի նյութը՝ կարող ենք եզրակացնել.

ա. Եվրոպական լեզուներում պահպանվել են ՀՆԽ վերականգնված *d^heu – հիմքից բխող իմաստներ (հոլ. duin, ֆր. dune, իտալ. duna, իսպ. duna,

¹⁶ Այժմ՝ Բելգրադ, Դանուրի ափին (Հարավսլավիա):

¹⁷ Այժմ՝ Իվերդուն, Նեվլատել լճի ափին (Եվեյցարիա): Այժմ՝ Ամբրեն, Դյուրանս գետի ափին (Ֆրանսիա):

¹⁸ Այժմ՝ Կաեռ, Լո գետի ափին (Ֆրանսիա):

¹⁹ Այժմ՝ Լանդո (Ֆրանսիա):

²⁰ Այժմ՝ Լիոն, հնավայրը՝ Սոն գետի ափին. հնավայր Գալան գետի վերին հոսանքում (Ֆրանսիա): Այժմ՝ Լեյդեն, Հոենտի դելտայում (Նիդեռլանդներ):

²¹ Այժմ՝ Մելուն, Սեն գետի կղզիներից մեկի վրա (Ֆրանսիա):

²² Այժմ՝ Վերդեն, Սաա գետի ափին (Ֆրանսիա):

²³ Այժմ՝ Նեվեր, Լուարա գետի ափին, այժմ՝ Նուան, Լուարայի հովտում, այժմ՝ Մուառոն, Էն գետի ափին (Ֆրանսիա): Այժմ՝ Նյուշատո (Բելգիա): Հնավայրը գտնվում է Դորդուայում (Ռումինիա):

²⁴ Այժմ՝ Զուլեստեր, Զոլն գետի ափին (Անգլիա):

²⁵ Այժմ՝ Դաուն (Իռլանդիա): Կելտական մասն բնակավայրերի ցանկը կարելի է շարունակել, սակայն բերվածն արդեն ավելի քան բավարար է հետապնդվող գաղափարի համոզիչ լինելը հաստատելու համար: Այնուհանդերձ, ուշագրավ է խեթական աղբյուրներում հիշատակվող Dunna (=անաիկ՝ Tiyana, որ գտնվում է Դրունք Կիլիկիա լեռնանցքից հյուսիս՝ ներկայիս Ulukışla քաղաքի մոտ, տե՛ս G. F. del Monte und J. Tischler, Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978, S. 439), ինչպես նաև Պարսկաստանի Դունդայ-Դյունդայ, Կիլիկիայի Դունկալե (Մարաշի գավառում) և Փոքր Հայքի Դունտար (Գարաեխարի գավառում) բնակավայրերի տեղանուններում «դուն» բաղադրիչի առկայության փաստը, որը, սակայն, կարող է ծագումնաբանական հատուկ ուսումնասիրության:

Ի դեպ, քննարկված հարցից դուրս համարելով, չենք անդրադառնում ժողովրդական կազմված և հիշյալ տարածքում սփռված բազմաթիվ ջրանուններին:

գերմ. Dune, ռուս. дюна «ավազաթումր», անգլ. down «քլուր, անտառագուրկ քարձուր», town «քաղաք»...)²⁶, ինչպես նաև գրավոր աղբյուրներում,²⁷ որպես կելտական հնավայրերի տեղանվան քաղաղդիչ (Lug [dun] um, Novio [dun] um...):

բ. Հայերենում դուին բառի «քլուր» իմաստը մոռացված է եղել Խորենացու ժամանակներից անհամեմատ առաջ, իսկ պարսկերենում dūvin նույնիմաստ բառը՝ ավելի ուշ:

գ. Պարսկերենում dūvin բառը պահպանվել է որպես անդամական մեջքնակավայրի՝ քրի վրա գտնվելու հատկանիշը շեշտող քաղաղդամաս (հմմտ. Sultan-dūvin...), քացառություն է կազմում Davin գյուղանունը (Ուսատվայում):

դ. Հայերենում պահպանվել է Դուին (Դունի, Դունայ...) - Դուին-Դվին՝ Ոստան Հայոց գավառում և Դունիկ-Դյունիկ-Դունիկ-Դվինի՝ Կարինի, Երզնկայի, Տարոնի գավառներում, որպես քնակավայրի հատուկ անուն,²⁸ այս է հաստատում նաև Փափստոս Բուզանդի աներկրա, հստակ վկայությունը՝ «... քլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին»²⁹:

ե. Զննվող հնավայրի Դուին-Դուին-Դվին տեղանունը քիտում է ՀՆԽ *d^[h]euռ-հիմքից, առանց իրանական միջնորդության:

Սույն քրի Դուին կոչվելու ամենահավանական terminus post quem non պետք է համարել Զ. ա. I հազարամյակի սկիզբը, ելնելով այս քաղմաշերտ հուշարձանի՝ վաղ երկաթի դարաշրջանի ամրոց-սրբավայրի քվազումից, սակայն, եթե հետագա պեղումները կհաստատեն այստեղ հնդեվրոպացի-

²⁶ Եվրոպական լեզուներում պահպանվել են նաև քաղաքաշինական ստումով իմաստային կապ ունեցող ՀՆԽ վերականգնված *b^[h]erg^[h] - հիմքից քլաղ իմաստներ (գերմ. Burg «ամրոց», Berg «գետ», ֆրանս. bourg «վարք քաղաք, ալան»):

²⁷ Г. Юлий Цезарь, Галльская война (Записки Юлия Цезаря и его продолжателей, М., 1962, кн. 11, 12; кн. VII, 11, 12, 14, 55). Տե՛ս նաև Dictionarium Latino-Gallicum=Dictionnaire Latin-Français.../ par Er. Noel, Paris, 1813.

²⁸ Հայերենի համար խորք չէ հասարակ գոյականը որպես տեղանուն գործածելը (հմմտ. Բլուր, Բլրակ, Բլրիկ անունով քաղմաթիվ գյուղեր Մեծ Հայքի Այրարատ, Սյունիք, Վասպուրական, Տուրքերան, Բարձր Հայք աշխարհներում, ինչպես նաև Աշտարակ տեղանունը Արագածոտնում, Բուրգ գյուղանունը Խաղտիք գավառում և Սեբաստիայի մահանգում կամ Բլուր լեռնանունը Սյունիքում): Այս առումով նշենք նաև Սյունիք անդամական մեկնության մեր վարձը՝ Միւնիք>սիւներ-լեռներ (հմմտ. ՀՆԽ *k^[h]el-հիմքից խեթ. kalmaṣa- «գետ», լատ. culmen, columen «գագաթ», «կատար», columna «սյուն» իմաստային զուգահեռը (տե՛ս Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 669):

²⁹ Փափստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ե., 1987, դպր. III, գլ. Ը:

ների ավելի վաղ ներկայություն, ապա անվանակազմության վաղեմությունը կորոշվի հնավայրի ստորին շերտի բնագրմամբ:

ВОПРОС О ДРЕВНОСТИ ТОПОНИМА ДВИН

Г. Г. КОЧАРЯН

Резюме

Сопоставления теоретических данных сравнительного языкознания (в древних европейских диалектах выступает и.-е. основа *d^hieup — "поселение на возвышенном месте") и фактического археологического материала [иранские Лала-дувин, Султан-дувин, армянского Дуин (Двин), Двник, кельтские Луддунум, Новнодунум, Камуллодунум, Дунум и другие укрепленные поселения с топонимикой, восходящей к той же и.-е. основе *d^hieup->кельтское *dup, распространены от Иранского плоскогорья, Армянского нагорья до Британских островов], показывает, что армянский Дуин (Двин) восходит к и.-е. основе *d^hieup-локально, без иранского посредничества (вопреки бытующему в науке мнению) и считает наивероятным terminus post quem по имени этого многослойного поселения топонимом Дуин начало 1 тысячелетия до р. Хр., исходя из датировки крепости-святилища в слое эпохи железа.